

Հ Ա Ն Դ Է Ս Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՍՂՈՒԹԻՒՆ ԱՊՐՈՒՍՏԻ ՅԱՆԳՂԻՍ

Քանի մը տարիէ 'ի վեր ամէն կողմանէ արտունջք կը լսուին ապրուստի դնոյն աճման վրայ, եւ այս դանդաւաներն այնպէս ընդհանուր տարածուած են, որ առանց քննութեան կը հաւատացուին . և անոնց պատճառներն կը փնտռուին, առանց նայելու թէ արգեօք իրաւացի են: Ուստի անգղիերէն օրագիր մը (Cornhill Magazine) կու գայ լուծելու այս խնդիրը . և կ'ըսէ թէ լաւ կ'ըլլայ յայսմ նմանիլ խոհեմութեան այն իմաստնոյն՝ որ յառաջ քան պատրաստուելու մեկնել զարմանալի գէպք մը, միշտ կը սկսէր ստուգել, թէ իրաւցընէ այն դէպքը պատահած էր . որով շատ մը աւելորդ աշխատութիւններէ ազատ կ'ըլլար:

Եւ իրօք այն օրագրին հատուածագիրն փաստերով կը ջանայ ապացուցանել, թէ ոչ միայն ապրուստի սղութիւնը չէ աճեր, այլ մանաւանդ նուազեր է. այսինքն թէ մի և նոյն եկամտով հիմա մարդ կրնայ աւելի սպօնալի կան կեանք մը վարել՝ քան թէ ասկէ կէս դար առաջ: Այն յօդուածագիրն համոզուած է թէ այս իւր կարծիքը իբր արտառոց մտքի մը ծնունդ պիտի համարուի, և անհաւատալի պիտի ըլլայ հասարակաց Գիշ անգամ տեսնուեր է նախապաշարմունք մը, որ այնպէս հիմնեալ ըլլայ միաձայն հաւանութեան վրայ, և առերևոյթ այնպէս անդիմադրելի ըլլայ: Զիցաւ տանտիկին մը՝ որ ամենօրեայ փորձովը չհաստատէ պա-

րենից սղութիւնը . և ոչ զերդաստանի մը գլուխ՝ որ տարւոյն վերջն հաշիւը գոցելով՝ չունդրադառնայ այս բանիս, և ոչ ալ տէրութեան վիճակագիր մը՝ որ հասած չըլլայ մի և նոյն հետեւութեանն:

Ուրեմն այնպէս պէտք է կարծել որ ասոնք ամէնքն ալ կը խարուին . և թէ այն տնտեսական երևոյթն՝ որուն համար այնչափ ընտանիք կը դանդաւորին իրօք չկայ . այլ միայն իրենց երեակալութեան մէջ գոյութիւն ունի: Այն յօդուածագիրը կը կարծէ թէ կարող է ապացուցանել այս բանս, սակայն պայմանաւ քննելու այն առաջարկութիւնը, որոշեալ պարագայից մէջ, սահմանելով և սեղմելով, որպէս զի ճշդէ և ճշգրտէ այն խնդիրը:

Ամեն բանէ առաջ պէտք է բացարձակապէս 'ի դուրս ձգել կարգ մը խորհրդածութեանց, որ բարոյականի կը վերաբերին . որոնք ընդհանրապէս մէջ կը բերուին այս տեսակ վիճարանութեանց ժամանակ, և ամենին տեղիք չունին: Այս ինքն թէ հիմնական բազմածախ հաճոյքը կու տան արգեօք այն մեծաբանակ հրճուանքն՝ աւելի քան ինչ որ երբեմն կու տային պարզագոյն հաճոյք: Բարեկեցութիւնն արդեօք կ'աւելցընէ մեր երջանկութիւնը: Բարոյախօսին կը պատկանի պատասխանել, իսկ տնտեսագիտին առջև բոլորովին տարբեր կը նկատուի այս խընդիրը: Արդեօք կարող եմ, այս կամ

ու, հայթհայթ եւ կարեւորն ու աւելորդն առաւելողոյն մասամբ, քան ինչ որ ասիէ քառասուն տարի առաջ կարող էր իմ գրիցս մէջ եղող անձ մը: Յայսմ էր կոյանայ բովանդակ խնդիրը, և պէտք է ամենին դուրս չելլել անկէ, ապա թէ ոչ՝ վտանգ է ընկնալու շփոթութեանց և վրիպանաց մէջ:

Փորձ փորձուեցաւ լուծելու այս խնդիրը միջին ճամբայ մը բռնելով. բայց այս հնարքն որ ըստ բաւականին լաւ արդարաւիք կու տայ երբ ժողովուրդական դատաց վրայ է խօսքը, որոնց ճաշակներն ու պէտքը պարզ են և երբէք չեն փոխուիր, բողբոջին կը կորսընցնէ իւր ուժն՝ երբ խօսքը միջին և բարձրագոյն դատաց վրայ ըլլայ, որոնք ընդհակառակն շատ տարբեր և շատ փոփոխական ճաշակներու պէտք ունին: Հակառակ դրութեամբ նիւթական օրինակ մ'առնունք, հանրական հետեւութիւն մը յառաջ բերելու համար:

Ահաւաստիկ երկու անձինք, հայր և որդի, որոնք բնակելով գաւառի մը մի և նոյն քաղաքը, մէկմէկէ քառասուն տարի հեռաւորութեամբ մի և նոյն կեանքը վարեն: Իւրաքանչիւրին տարեկան եկամտան ըլլայ 25000 ֆրանգ: Հօրը ճաշակները փոխանցած ըլլան որդւոյն. երկուքն ալ սիրող ըլլան գրոց և ճանապարհորդութեանց, գոնեւրին բաց ըլլայ հիւր ընդունելու, ու միանգամայն փախիլն յաղմկաց և 'ի շուշուրութեանց: Բանանք անոնց հաշուեգրեաները և կազմները անոնց իւրաքանչիւրին ելեմտից հաշիւը:

Յառաջ քան ինչեւ թուող մանրամասանցը, պէտք է դիտել որ այնպիսի խնդրոց մէջ վերլիկերանց մեքնաւորութեամբ կ'ըլլաին հաշիւները, վասն զի գիտութեանց շարունակ յառաջադիմութիւնն և ձեռնարուեստից անընդհատ զարգացումը թիւջ չեն տար ճիշտ բաղդատութիւն մ'ընելու ներկային և անցելոյն, անգագար 'ի վաճառ հանելով բազմութիւն նորանոր արգասեաց, որոնք ըստ ամենայնի չափաւոր են, բայց անկարելի է ստակով

անոնց դին կտրել: Օրինակի համար, ինչպէս կարելի է գին կտրել այն չափուն, որ լուսանկայտութիւնը կու տայ, կամ նոյն իսկ խնայութիւն ժամանակի՝ որ երկաթուղիք կը վաստակուեն:

Գժուարութեան աղբիւր մ'ալ է զանազանութիւնն որպիսութեան արգասեաց: Հակառակ ընկալեալ կարծեաց, յօգուածագիրը կ'ըսէ թէ ձեռագործք հաւասար գնով լաւագոյն են, քան ինչ որ չէին ասիէ քառասուն տարի առաջ, և հասարակաց սխալ այն է որ սովոր են բաղդատել այժմեան կարասիքն անցելոյն առաջնական որպիսութեանցն հետ: Անցելոյն արտադրութիւններէն անոնք միայն մեզ հասած են, որոնք որ արտաբոյ կարգի հաստատութիւն մ'ունէին. նոյնը պիտի ըլլայ այժմեան արտադրութեանց համար: Ըստ մեծի մասին կիրառութեանց միտոր խորտակին կամ պիտի սպառին, և պիտի մնայ անոնցմէ քանի մ'օրինակ, որ հաւանօրէն պիտի ծառայեն յետնոց բաղդատութիւն ընելու բոլորովին մեզ 'ի շահ: Օրինակ մը միայն մէջ բերենք, արդի ճարտարարուեստութեան քերականացութիւնը. չափաւորագոյն քաղաքացի կերպաստան մը այսօր կանոնաւոր կանթեղ մը և կազգործածելով կը վայելէ այնպիսի լոյս մը, զոր մեծատուն մը զարուս սկիզբը չէր կրնար ձեռք բերել:

Վերջին գժուարութիւն մ'ալ, և ոչ այնչափ վրդը, տրամաբանելու կերպէն յառաջ կու գայ, որ որչափ ալ արտաւոր ըլլայ, սակայն ոչ ինչ նուազ շատ սովորական եղած է: Ելլան ու ոչխարի միւր թանկըցեր են, որ ընտանեաց համար կորուստ մ'է: Իրաւ հիմա ճանապարհորդութիւնը այնչափ սուղ չեն, բայց որչափ որ աւելորդ ճամբու ծախք կ'ըլլուի՝ համեմատութեամբ փոխառինն ոչ ինչ է ու ընկերութեան մը պահանջներն իր ունեցած միջոցներով կը չափուին. ասոնք ինքնագոյ իրաւունք չեն, և չեն մեծնար անկախօրէն 'ի պայմանէ ընկերութեան: Ուրեմն երբ ընկերութեան պահանջը կ'աւել

նոյ՝ պերճանաց այս կամ այն առարկայից համար, ապահով է թէ այս առումը կը համապատասխանէ կամ առտիճանաբար ազգին հարստանալուն և կամ ուրիշ առարկայից զինքն աճըննալուն: Վերջապէս միշտ փոխարինութիւն մը կայ: Հիմա անյնիկը թուոյ: Աւելի բացայայտ ընելու համար՝ հաւարելով ծախքն ըստ իրենց ընտելեանքս: Առաջին տեղին կը գրաւէ տնական ծախքն, այսինքն՝ պարենից, վառելի նիւթոց, և այլն: Հօս բաղդատութիւնը դուրին է, համեմատութեամբ գրեթէ ամենայն ինչ թանկըցեր է: Մսին գինը կրկնապատկէն աւելի է, նոյնպէս հաւեղինաց և որսական կենդանեաց: Կարգը՝ կրկինէն ալ աւելի գին կ'ընէ: հաւկիթն ու կաթը նմանապէս շատ սուղցեր են: Հայը աւելի փոփոխութիւն չկրեց, ընդհակառակն շարքն և սուրճն աճընցած են, թէն ալ կիսով չափ կամ երկու երրորդ վար կ'արժէ: Իսկ բուն համեմունք ոմանք բարձրացեր են, ոմանք ալ իջեր են. ամբողջին վրայ եղած տարբերութիւնն՝ ոչ ինչ է: Սովորական գինիք՝ աճընցած են, չմոռանք որ յլնդդիա եկք, մինչդեռ ազնիւ գինիք անփոփոխ մնացին կամ թէ աւելի սուղցան: Հանքածուխը շատ աւելի աճան է հիմա, թէպէտ և երեք տարիէ ՚ի վեր երթալով գինը կ'աճի, քան ինչ որ էր ասկէ քառասուն տարի առաջ, և այս ալ այն տեղումներն որ հետու կը գտնուին ամխահաղքէն: Հիմա գնոց բովանդակ այս փոփոխութիւնքն զնելով ՚ի կշիռ, կը տեսնենք որ որդին ներկայապէս ստիպեալ է տարուան մէջ զոհել իւր հասուլին քառորդ մասը, որ է 6250 ֆռանդ, տնական ծախուց, մինչդեռ հայրը, որուն սեղանը ոչ ինչ նուազ ճոխ զարդարուած էր, տնական ծախքունէր տարին 1000 ֆռանդ: Արդոյն հաշուին մէջ միայն միւր 1900 ֆռանդ կը հասնի:

Անցնիք այն ծախուց, որ կրնայ ըսուիլ կրքոքեալ ճախք, որուն մէջ կը մտնէ ոչ միայն զպրոցի կամ վար-

ժարանի վճարքն, այլ այն ամէն ծախք, որ կը պատշաճին մտաւորական զարգացման. գիրք, օրագիրք, գրիչ, թանաք, և այլն: Հօս է որ ժողովուրդն աւելի յօժարեալ է եղած ծախքը մտածել, առանց միւր զնելու որպիսութեան վաճառուց որ կ'ընդունի փոխարէն իւր դրամոց: Կրթութիւնը հիմա շատ աւելի թանկագին է, բայց չի համեմատուիր այն կրթութեանն՝ որ կը տրուէր ասկէ քառասուն տարի առաջ զաւառական դպրատան մը մէջ ինչ որ կը տրուի կայսօր մի և նոյն աստիճանի դպրոցի մէջ: Դարձեալ ընտանեաց հայր մը որ ուզենայ խնայութիւն ընել կրթութեան վրայ՝ կրնայ հիմա ալ զրտնել անբարեկարգ դպրոցներ՝ ուր աճան գնով հրահանգել տայ իւր որդիքն: Բայց այն կրթութիւնն ալ ստակին համեմատ կ'ըլլայ: Մի և նոյն անդրադարձութիւնը կը պատշաճին նաև բարձրագոյն հրահանգաց, թէպէտ և հօս ծախուց բարձրութիւնն այնչափ զգալի չէ: Համալսարանք ալ շատ աւելի լաւացան, ինչպէս երկրորդակարգ վարժարանք, և համալսարանաց ծախքն համեմատութեամբ չաճեցաւ: Իսկ մտաւորական զարգացման գործեաց կողմանէ, առաւելութիւնը բոլորովին արդի ժամանակիս կը տրուի: Դասական դրեանք, յիսուն կամ վաթսուն անդամ նուազ կ'արժեն քան ինչ որ երբեմն կ'արժէին, և աւելի լաւ տպագրուած են: Թոյլմա իր գինը կիսով չափ իջեցուց, իսկ ձեր կրկնապատկեց և եռապատկեց: Թողունք այն բազմաթիւ պատկերազարդ օրագիրները, հանդէսները, և այլն, որոնք ամէն տուն կը գտնուին այսօրուան օրս, և առաջնոց անձանթով էին. անոր համար բաղդատութեան տեղի չունին: Նոյն բանն ըսելու է նաև լուսանկարուց, ներկերանգ վիմագրութեանց, և այլն, համար ալ: Համարու ըսնիք, հիմա դաստիարակութեան ծախուց վերայ եղած խնայութիւնը խելքէ մտքէ վեր են: Անոնք որ մտաւորական բաները կը բաղդատեն եզան մսին կամ ոչ-

խարի միևն հետ, կրնան ապահով ըլլալ որ հաշուեցուցալին այս զլխուն վրայ եղած շահը, առաւելապէս կը հատուցանէ այն պակասորդը՝ որ մնացեր է մտադործին համար:

Ճանապարհորդութիւնք միջին դասաց մեծագոյն մասին համար նոր արգիւնարեւութիւն եղան: Հաղորդակցութեան արդի միջոցներու գիւրու-թիւնք և երազութիւն ամենուն ծանօթ ըլլալով, աւելորդ է կանկ առնուլ այս նիւթին վրայ: Այս միայն յիշեցու-նենք, ծախուց նկատմամբ, որ եթէ հիմա ճանապարհորդութիւնք աւելի սուղ են, վասն զի աւելի պահանջող եղեր ենք: Թիրդի և Ալպիայց մէջ դեռ քանի մը տեղեր կան ուր պանդոկներն այնպէս մնայեր են ինչպէս որ էին դարուս սկիզբը Օպերլանտի մէջ. գիւններն ալ ամենեկին փոփոխութիւն չեն կրած, և եթէ սիրողք անցելոյն ուղեւան գոհ ըլլալ այն անկողիններով որոնց մէջ պառկէին իրենց հաղբը, կրնան այն տեղուանքն ապրիլ առանց աւելի ծախք ընելու: Տեղափոխութեան միակ միջոցն որուն գինն աւելցեր է՝ ձիուն գինն է: Համմամ տարբար ձիուն գինը շատ բարձրացեր է, և պատճառն հասկընայլը շատ դժուար չէ: Հայրը լու ձի մ'ունէր 7 կամ 800 ֆրանցի, միջակ ձի մը 5 կամ 600 ֆրանցի: Որդին չափաւոր ձի մը ունենալու համար պէտք է հասուցանէ 1000 կամ 1500 ֆրանց: Իսկ անկէ դուրս՝ ամեն բանի վրայ ըզգալի նուազութիւն կայ գնոց: Հիմա Անգլիա շոգեկառաց առաջին տեղոյ մը գինը որոշեալ տեղոյ մը համար այնչափ կ'արժէ, որչափ կ'արժէր երբեմն ճեպընթաց կառաց յետին տեղին: Ուստի սուրհանդակի կառքով ճանապարհորդութիւն մը՝ շատ աւելի սուղ կը նստէր քան թէ հիմա երկրպետութիւն, իսկ պարզ շրջապայութիւն մը ընելու կառաց վարձքը գրեթէ նոյն մնացեր է: Տուներուն վարձքն զգալի կերպով բարձրացեր է: Որդին տանը վարձք 3 կամ 400 ֆրանց աւելի կը

հատուցանէ տարին քան թէ հայրը, թէ և որդւոյն տունն աւելի մեծ և հանգիստ ըլլայ: Հարկերն ալ նմանապէս աճեր են, սակայն փոխարէն փողոցներն առողջապահ են և լուսաւորուած և ոստիկանութիւնն ալ բարեկարգուած:

Դարձեալ կորուստ կայ, և մեծ կորուստ ծառայից ամսական վարձուց վրայ: Պարտիզպանին վարձքը նոյն մընացեր է, շտաբը 25 ֆրանց, բայց հայրը կը հատուցանէր արխանոյն և խոհարարին 250 և 300 ֆրանց տարին, հիմա որդին ստիպուած է տալ իրեններուն 375 և 450 ֆրանց: Տանն սպասաւորաց վարձուց բովանդակութիւնը 3750 ֆրանց կը հասնի տարին, մինչդեռ առաջ 3000 ֆրանց չէր հասնէր:

Էրիկ մարդկանց հագուստը մեծ փոփոխութիւն մը կրած չէ գնոյն կողմանէ: Չեռնայներն աւելի սուղ են, իսկ գլխարկներն աւելի աժան: Անոնք որ այսօրուան օրս առանց խղճելու մետաքէ գլխարկի մը 18 ֆրանց կը հասուցանեն, առաջներն և ոչ 32 կամ 33 ֆրանց տայով կրնային կրու մագէ շինուած գլխարկ մը գնել. և հօրը հաշուեզիրքը քննելով կը տեսնենք որ մէկը քան զմիւսն աւելի բաղաւոր չէ գլխարկի մասին: Իսկ կանանց հագուստին գալով, որովհետեւ այն յօղուածազիրք ամուրի անձն մըն է, անոր համար ինք զիկքը բոլորովին անկարող և անյարմար կը համարի որ և իցէ կարծիք մը յայտնելու: Միայն գոհ կ'ըլլայ ցուցընել թէ կանացի տարագոց նիւթերն հիմա աւելի աժան ըլլալով քան թէ առաջները, բնական է թէ կանայք աւելի աժան գնով կը հագուին:

Մինչև հիմա այն ծախուց քննութիւնքն ըրինք, զորոնք կարելի է դասաւորել, սակայն պատահական ծախուց զուլար կը մնայ, որուն ծանրութիւնը գերդաստանի մը բարեկեցութեանը հետ աստիճանաբար կ'աւելնայ: Տարի մը տունը ներկել և տախտակամած յատակները նորոգել կու

տայ, յաջորդ տարին կառք մը կը գնէ կամ պարտեկը կ'ընդարձակէ: Ետքը կու գան բժշկին այցելութիւնքը, ընծայք, առ ձեռն ծախք, վերջապէս իւրաքանչիւրին քմացն հաճոյ առանձին ծախք, ինչպէս պատկերը, ծագիկը, յախճապակիք (faïence), ձի, և այլն, ընտանեաց ոմանց մէջ այս անսակ ծախք եկամուտին մեծագոյն մասը կ'ուտեն, անոր համար անկարելի կ'ըլլայ առաջուց զին մ'որոշել: Բաւական է գիտել որ գործաւորաց վարձքն չափազանց կերպով աւելցեր է, իսկ այն նիւթերն որ մեքենայից կիրառութեամբ կը շինուին, հետզհետէ աժըննալու վրայ են: Ուստի գրեթէ տան մը բոլոր կահ կարասիքն հիմա աւելի աժան գնով կը գնուին քան թէ քառասուն աարի առաջ, որով տարւոյն վերջը շահ մը ձեռք կը բերուի ոչ աննշան: Գլխաւորապէս երկաթն ու ապակին շատ աժընցան: Դահլիճին հայելին, որուն համար հայրը 750 ֆրանգ կը հատուցանէր, որդին առ առաւելն 250 ֆրանգ կը հատուցանէ: Կրակարանաց կազմածքը, ինչպէս նաև այլ մետաղեայ անօթք՝ գրեթէ կիսով չափ աժընցեր են: Նմանապէս գորգերն ալ աժընցեր են. տալով 5,50 ֆրանգ, Պրիւքսէլի լաւ դորգ մը կրնանք գնել, որուն մեր հարքն առ սակաւն 6,5 ֆրանգ կամ 7 ֆրանգ կը հատուցանէին:

Յետ նշանակելու այս մէկ քանի թուանշանները, պատահական ծախսոց գլուխը կը թողուիք ընթերցողին անձնական դատողութեամբ, յիշեցնելով որ տարեկան ելքն ու մուտքն առաջուց կարգի գնելու ժամանակ, քիչ անդամ բաւական լուսանցք մը կը թողուի պատահականաց համար: Վերջապէս գրեթէ ամէն կարևոր ծախք, որոնք ամենեկին կախումն չունին անհատից առանձին յօժարութեանէն և առանց որոց մարդ չի կրնար ապրիլ, զգալի համեմատութեամբ աճեր են: Նոյն իսկ համարելով որ հազուատի վերաբերեալ գները նոյն մնացած ըլլան քառասուն տարի ետքն ալ, սա-

կայն ամեն ընտանեաց համար չէ այս բանս, ուր տանտիրին մը կայ. որդին՝ տանն ընդհանուր ծախուցը վրայ, ինչպէս են պարենից, վարձուց և ծառայից ամսականներուն, աւելցած կը գտնէ 2000 ֆր. մինչև 2500 ֆրանգ. որ իրաւցընէ շատ ծանր է մտածելով որ հայրը արդէն իւր եկամտիցն երկու երրորդը կը զոհէր այն մի և նոյն ծախուց: Միւս կողմանէ շահ կայ գրեթէ զարդարանքի (luxe) ամեն ծախուց վրայ, ինչպէս ճանապարհորդութիւնք, գրեանք, և այլն. նոյնպէս այն ամեն ծախուց վրայ, որոնք պատահականաց կարգը կը մտնեն: Արդեօք ասոնցմէ մէկը կը փոխարինէ միւսոյն: Այս յայտնի է որ պատասխանն իւրաքանչիւր անձին գրութեանէն կախումն ունի: Մէկն որ չափաւոր եկամուտ և բազմաթիւ ընտանիք մ'ունի, բոլոր եկածը պարտաւորի ծախուց կ'երթայ, որով նեղութիւն կը քաշէ ապրելու կարևոր նիւթոց գինը բարձրանալով: Հաւասար եկամուտ մը ոչ այնչափ և ոչ այնպէս լաւ բարեկեցութիւն չի մատակարարեր որդւոյն ինչ որ հօրը կը մատակարարէր. ընդհակառակն մեծատունը պէտք է զգայ որ մտաւորական վայելից կողմանէ շատ աւելի կը շահի քան ինչ որ կը կորսնցնէ նիւթական պիտոյից կողմանէ: Ամբողջապէս առնելով, Ապրիլուտի սղոյքերուն վրայ այս քըննութիւնն ինչ տպաւորութիւն որ կը թողու մտաց վրայ՝ այնչափ հաճեցունցիչ չեն նեղ վիճակ ունեցողներուն համար. և ընթերցողաց ամենքն ալ թերևս նոյն հաճութիւնը չզգան, որով յօդուածագիրը կը հասնի այս արտառոց եղրակացութեան:

« Ամենէն աւելի լաւագոյն բաղդի վիճակեալն՝ ամուրի և գրուոր մարդն է. իւր կորուստները գրեթէ ոչ ինչ են. ինչ որ մտավածառն իրմէ կը հանէ, թէյի և ծխախոտի վաճառականքն իրեն կը դարձունեն զայն, և իր արուեստին պէտք եղած նիւթոց տասնէն իննին վրայ կրնայ խնայութիւն ընել, երբեմն ամենափոքր, շատ ան-

զամ ոչ սննչան, և քանի մի պարա-
գայից մէջ չափէն աւելի »:

Հաւանական է, թէ նոյն ինքն յօ-
դուածագիրն ալ այս նախայիշատա-
կեալ գրադէտ ամուրեաց դասակար-

գէն ըլլայ, և ինչպէս միշտ մարդս հա-
կեալ է իր անձէն չափել զուրիշները,
ուստի անձնական պատճառներէ շար-
ժեալ կ'ըսուի թէ ամենայն ինչ ըստ
կարի աժան է:

ՕՐԷՆՔ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ Ի ՌՈՒՍԻԱ

Զօրութեամբ օրինացն $\frac{1}{13}$ յունուարի
1874, որ գործագրական է յամենայն մա-
սունս ինքնակալութեան և թագաւորու-
թեանն Բոլոնիոյ, 'ի բաց առեալ բանի մը
տառնձնակ գաւառներ Սիպերիոյ, Թուր-
քաստանի և Սնդրակովկասու, ինչպէս Խա-
զախներն ու օտար ժողովուրդները, ամեն
ուստիացի որ լիապէս կը վայելէ իր քաղա-
քական իրաւունքը, պարտական է զինուո-
րելու, սկսեալ 1 յունուարի այն տարւոյն,
որուն մէջ կը լրացունէ 21 տարեկան հա-
սակը: Հետեւեալ պատճառները ազատու-
թիւն կու տան զինուորական ծառայութե-
նէ. մարմնական տկարութիւնք, ընտանե-
թեան յարմար անձանց թիւը բաւական ըլ-
լայ. ապա թէ ոչ զինուորագրութիւնը տե-
ղի կ'ունենայ ըստ երեք ստորոգութեանց.
քրիստոնեայ եկեղեցական վիճակը բոլո-
րովին սզատ կ'ընէ զինուորական ծառա-
յութենէ. բժիշկք, զեղազորձք, անասնա-
բոյձք, դաստիարակք ուղտու կ'ըլլան զի-
նուորական ծառայութենէ խաղաղութեան
ժամանակ, միայն դաստիարակք երբ վի-
ճակին ելլէ՝ 15 տարի պաշտօնի բանակին
(réserve) կը վերաբերին. քանի մը անցողի-
կան մարմնական տկարութիւնք, ընտա-
նեաց բանի մը պարագայք, ինչպէս նաև
աստիճան մ'ուսուցանականութեան կրնան

պատճառ ըլլալ ետ ձգելու զինուորագրու-
թիւնը: Ծառայութեան բոլորական տեղ-
ուութիւնն կ'ըրոպայի Ռուսիա՝ կը բովան-
դակէ 15 տարի, 6 տարի ներգործօն բա-
նակին մէջ, 9 տարի պաշտօնի բանակին
մէջ. իսկ Սիպիայի Ռուսիա՝ զինուորական
ծառայութիւնը կը բովանդակէ 10 տարի,
7 տարի ներգործօն բանակին մէջ, 3 տա-
րի պաշտօնի բանակին մէջ. — Աստիճան
մը ուսուցանականութեան կը համառօտէ
զինուորական ծառայութեան բոլորական
տեղուցութիւնը, երբ զինուորագրեալը կա-
մաւոր զինուոր կ'երթայ և վիճակ չի հա-
ներ, ու կը վերածուի կամ $9\frac{1}{4}$ տարի,
կամ $9\frac{1}{2}$ տարի, կամ 11 տարի, որոնց 3
ամիսը, 6 ամիսը կամ 2 տարին պէտք է
անցունել ներգործօն բանակին մէջ: Երբ
զինուորագրեալը կամաւոր չ'երթար ու վի-
ճակ կը հանէ, իր ներգործօն ծառայու-
թիւնը կը վերածուի ու կ'ըլլայ միայն կամ
6 ամիս, կամ մէկ ու կէս տարի, կամ 3
տարի և կամ 4 տարի (6 տարի յԱսիա)
ըլլալով զինուորական պարտաւորիչ ծա-
ռայութեան տեղուցութիւնը 15 տարի (10
տարի յԱսիա): — Այն պատանիք որոնք
կը զինուորագրին իրր Ախորհրէի (այսինքն
կամաւորք՝ ազատ 'ի ծառայութենէ) կը հա-
մարուին նկատմամբ իրենց ծառայութեան
ժամանակին իրր մասն կազմող բանակի:

